ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԾՁԲ-20/10
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

ք. Երևան «20» դեկտեմբերի 2019թ.

«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս կազմակերպության նախագահ Գրիշա Խաչատրյանի, մի կողմից և ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս համայնքի ղեկավար Միքայել Ղարաքեշիշյանի մյուս կողմից, հետագայում՝ Կողմեր, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն Պայմանագրով Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է սպասարկել Պատվիրատուի մոտ ներդրված «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը» (այսուհետ՝ ՀԿՏՀ): Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին սույն պայմանագրի 3.1 և 3.2 կետերով սահմանված կարգով, չափերով ու ժամկետներում վճարել կատարված աշխատանքների դիմաց:

1.2 ՀԿՏՀ սպասարկումը ներառում է.

- Մշտական պրոֆիլակտիկա և ՀԿՏՀ-ում բացահայտված ծրագրային սխալների վերացում, բարելավումների կատարում,
- Պատվիրատուին ՀԿՏՀ-ում կատարված փոփոխությունների և բարելավումների մասին իրազեկում, խորհրդատվության տրամադրում,
- Պատվիրատուին ՀԿՏՀ-ը այլ տեղեկատվական համակարգերի հետ ինտեգրման հարցերով մասնագիտական խորհրդատվության տրամադրում,
- Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուի սերվեր համակարգչում ՀԿՏՀ և անհրաժեշտ այլ ծրագրերի տեղադրում, վերատեղադրում,
- Պատվիրատուի սերվեր համակարգչում ՀԿՏՀ նոր տարբերակի տեղադրում, ինչպես նաև համակարգի տեղափոխում նոր սերվերային միջավայր,
- Համակարգի օգտվողների կառավարման ենթահամակարգում լիազորությունների ծրագրային փոփոխություններ և լրացումներ,
- Պատվիրատուի կողմից ՀԿՏՀ գործարկման արդյունավետության քանակական և որակական մշտադիտարկման պարբերաբար իրականացում: Բացահատված թերությունների և խնդիրների մասին Պատվիրատուին տեղեկացում և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- Պատվիրատուի գրավոր դիմումի հիման վրա նրա կողմից ներկայացված մասնագետների վերապատրաստում,
- ՀԿՏՀ-ի հետ աշխատելու վերաբերյալ Պատվիրատուի աշխատակազմին (ներառյալ բնակավայրերի վարչական ղեկավարներին և օպերատորներին) խորհրդատվության և տեխնիկական աջակցության տրամադրում. այդ թվում հեռախոսի, էլեկտրոնային կապի միջոցներով /ինտերնետ, էլ. փոստ, Skype ծրագիր/:
- Պատվիրատուի ցանկությամբ և համաձայնությամբ փաստաթղթերի ձևաթղթերում անհրաժեշտ փոփոխությունների կատարում,
- Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ապահովման համար ՀԿՏՀ և Mulberry սերվերների հասցեների ռեեստրի վարում և պարբերաբար փոխանցում պատվիրատուին և այլ շահագրգիռ կողմերին,
- Պատվիրատուի համար Կատարողի պաշտոնական կայքում (http://infosys.am) «Սպասարկում» հարթակի ապահովում և վերջինիս միջոցով Կատարողի կողմից ՀԿՏՀ սպասարկման վերաբերյալ առցանց ստացված հարցումներին արագ արձագանքում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից իրականացվող աշխատանքների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.2 Կատարողն իրավունք ունի՝

2.2.1 Սույն Պայմանագրի 3 կետով նշված ժամկետներում և կարգով ստանալ կատարված աշխատանքների գումարը:

2.3 Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1 Պայմանագրի 1.1 և 1.2 կետերով նախատեսված աշխատանքները կատարելու համար նախօրոք ապահովել անհրաժեշտ համապատասխան բնութագրերով օժտված տեխնիկական միջոցների և ստանդարտ ծրագրային միջոցների առկայությունը:

2.3.2 Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները՝ սույն պայմանագրի 3 կետով սահմանված կարգին և չափին համապատասխան:

2.3.3 Ապահովել «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ»-ի շահագործման կանոնների պահանջները՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը համարվող հավելվածի (կցվում է):

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Ապահովել աշխատանքների իրականացումը՝ սույն Պայմանագրով սահմանված պայմանների համաձայն:

3. Աշխատանքների արժեքը և հաշվարկման կարգը

3.1 Սույն Պայմանագրով նախատեսված սպասարկման աշխատանքների արժեքը կազմում է ամսական 16500 (տասնվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):
3.2 Պատվիրատուն պարտավոր է վճարել Կատարողին սպասարկման աշխատանքների ամսական գումարը համապատասխան հաշիվ-ապրանքագիրը ստանալուց 20 (քսան) օրվա ընթացքում:
3.3 Լրացուցիչ աշխատանքներ, որոնք նախատեսված չեն սույն Պայմանագրում, կարող են կատարվել Կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրերի հիման վրա:
3.4 Պայմանագրի գինը կարող է ավելանալ համայնքի միավորման, սպասարկվող համակարգում նոր բաղադրիչների ավելացման, այլ տեղեկատվական համակարգերի հետ փոխգործելիության ապահովման, տվյալների փոխանակման մեխանիզմների գործարկման հետ կապված աշխատանքների իրականացման դեպքում:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների՝ Կողմերի երեքական ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2020թ. առաջին աշխատանքային օրը և շարունակում է գործել մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը:
5.2 Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել պայմանագրից՝ մեկ ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս կողմին:

6. Ֆորս - մաժոր

6.1 Սույն Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ դրույթներ

7.1 Կատարողը ՀԿՏՀ-ի սպասարկման աշխատանքները կատարում է «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» Հ/Կ աշխատանքային սենյակում /սենյակներում/: Սպասարկման աշխատանքներն իրականացվում է աշխատանքային օրերին, ժամը 9:30 –ից մինչև 18:30-ը:
7.2 Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները և հաշվարկային հաշիվները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարան	«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ ք. Երևան, Կոմիտասի պող. 51 «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900256101016 ՀՎՀՀ 06954104	Հ/Հ 220003351206000 ՀՎՀՀ 03012547
Համայնքի ղեկավար՝ Մ. Ղարաքեշիշյան	Կազմակերպության նախագահ՝ Գ. Խաչատրյան
Կ.Տ	Կ.Տ